Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 682 - Ա որոշման

«ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողների համար համալսարանին պատկանող Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում ուսումնագիտական և փորձացուցադրական դաշտի կաթիլային ոռոգման ցանցի տեղադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112:
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, մարզ Արմավիր, կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	2 628 900 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանողներ և փորձագիտական անձնակազմ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թ. սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում Հայաստանի ազգային ագրարային համալսարանին պատկանող, ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում գտնվող ուսումնագիտական և փորացուցադրական դաշտում կաթիլային ոռոգման խողովակների ձեռքբերում և անցկացում: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 2 628 900 դրամ (երկու միլիոն վեց հարյուր քսանութ հազար ինը հարյուր) դրամ՝ առանց ԱԱՀ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու	Նախատեսվում է Նյուպլաստ ՓԲԸ-ից (ՀՎՀՀ 09103261) ձեռք բերել 20 700 մետր AC-PC*16*0.99մմ, 0.4մ,1. 0լ/ժ և ԻՍՕ 9261-2004 ստանդարտի պահանջներին համաձայն հունական

	ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	արտադրության կաթոցիկներով կաթիլային ոռոգման խողովակներ: Ձեռք բերվող խողովակների ընդհանուր արժեքը կազմում է 2 628 900 դրամ՝ առանց ԱԱՀ: Խողովակների տեղադրումը իրականացվելու է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից՝ կամավոր հիմունքներով մասնագետների ներգրավմամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների և այլ մարմինների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություններ են ներկայացվելու Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչության և ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

08.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ